Արձանագրություն N 3

«154ԴՊ-ԳՀԱՊՁԲ-18/1» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան, Ֆրունզեի փ. 4 շ. **«10» «12» 2018թ**
ժ.14:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Բաբայանը,
Հանձնաժողովի անդամներ՝ Ի. Մելիքսեթյանը, Ա. Վարդերեսյանը, Գ. Առաքելյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Հ.Ղազարյանը

1. Գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորումը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու մասին

(***Ա. Բաբայան***)

Ընդունել ի գիտություն, որ.

- Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ «ՖՈՏՈՆ» ՍՊԸ-ին և «ՏԻԳՐԱՆ ԲԱԼԴՐՅԱՆ ԱՐԱՅԻ» Ա/Ձ-ին 04.12.2018թ. ծանուցվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը, առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը ներկայացնելու մասին, որոնց կողմից համապատասխան փաստաթղթերը ներկայացվել են հրավերով սահմանված ժամկետներում:
- 04.12.2018թ. ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում է ներկայացվել՝ «ՖՈՏՈՆ» ՍՊԸ-ի և «ՏԻԳՐԱՆ ԲԱԼԴՐՅԱՆ ԱՐԱՅԻ» Ա/Ձ-ի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը, ընդ որում ՝ եթե ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին չի տրամադրում հարցման մասին եզրակացություն, ապա մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող:
- ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից հարցման եզրակացությունը ներկայացվել է սահմանված ժամկետներում:
- Հանձնաժողովի քարտուղարի կոմից 07.12.2018թ. առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և Հայաստանի Հանրապետության ԿԱ ՊԵԿ-ից ստացված եզրակացությունը տրամադրվել է հանձնաժողովի անդամներին, որի գնահատման արդյունքները բերված են ստորև.

Մասնակցի հայտի գնահատման չափանիշները գնահատականը			**Մասնակցի հայտի գնահատման արդյունքները**	
			Մասնակցի անվանումը	
			«ՖՈՏՈՆ» ՍՊԸ	**«ՏԻԳՐԱՆ ԲԱԼԴՐՅԱՆ ԱՐԱՅԻ» Ա/Ձ**
1	«Մասնակցության իրավունքը» չափանիշը	Բավարար Անբավարար	Բավարար	Բավարար
2	Առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը	Բավարար Անբավարար	Բավարար	Բավարար
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ		**Բավարար Անբավարար**	**Բավարար**	**Բավարար**

(Ա. Բաբայան)

Հանձնաժողովը որոշեց.

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1

Ընտրված մասնակից ճանաչել՝

1-2-րդ և 4-5-րդ չափաբաժինների մասով՝ **«ՖՈՏՈՆ» ՍՊԸ-ին,**

3-րդ չափաբաժնի մասով՝ **«ՏԻԳՐԱՆ ԲԱԼԴՐՅԱՆ ԱՐԱՅԻ» Ա/Ձ-ին:**

Ընտրված մասնակիցը ճանաչվել է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 2

- Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

Հանձնաժողովի		
Նախագահ՝		Ա. Բաբայան
Անդամներ՝		Ի. Մելիքսեթյան
		Ա. Վարդերեսյան
		Գ. Առաքելյան
Քարտուղար՝		Հ.Ղազարյան